Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (18 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), ՆԶՊ-ի (0.5 դրույքաչափ), ֆիզիկայի (4 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների, 3 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների, 3 դասաժամ), ֆրանսերենի (10 դասաժամ), ռուսաց լեզվի (18 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (19 դասաժամ), պատմության (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 29-**ին՝ ժամը** 14:00-**ին,** ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյեի հիմնական **դպրոցում, հասցե՝** ՀՀ Լոռու մարզ, գ. Բլագոդարնոյե 1 փող., շենք 32**:**

Տեղեկությունների համար զանգահարել (093)02-87-50 **հեռախոսահամարով:**